

ԻՄ ՊԱՊԻԿԻՆ . * * *

ՊԱՊԻԿԻՍ ՄԵՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ

* * * ՄԵՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ

Թաց է, Թաց դրսում, — անձրև է կա-
թում անհունի կրծքից, անձրևը Թրջում
մայր հողը սրտում...

Ցուրտ ու խոնաւ է դրսում. —
իմ հոգին դուրս է ձգտում...

Գեղջուկ, անձև խաշի տակ,
Խաչը ամուր ցուրտ հողում,
Ախ, իւր սիրած հողի տակ
Քուն է առել իմ բալան. —
Հողի, ջրի իմ Ախպօր,
Մի դաւածան սուր գնդակ
Սիրտը կիսեց իմ Ախպօր...

— Կանգնի՛ր, ժամանակ՝ անսխիւտ,
մարդակներ, թող երկնք փարւեմ իմ սի-
րուն բալին, թող անվերջ գրկեմ իւր
հողաթումբը, — չէ՛ Ախպէր չունեմ՝ ես
լաց եմ լինում, չէ՛ նրա հետ եմ՝ ես չեմ
մոռանում...

Անութ խաշի թեի տակ,
Խաչը ցցած լուս հողում,
Հէնց իւր պաշտած հողի տակ
Քուն է մտել իմ բալան. —
Մայր դաշտերի իմ Ախպօր
Մի դաւածան, սուր գնդակ
Կեանքը մարեց իմ Ախպօր...

Թաց է, Թաց դրսում, — անձրև է կա-
թում անհունի կրծքից, անձրևը Թրջում
մայր հողը սրտում...

Ցուրտ ու խոնաւ է դրսում. —
իմ հոգին դուրս է ձգտում...

Ա.

Մեզ ժպտում էին սարերը հեռում,
դարերը մօտիկ՝ վաղորդեան ժամին. մենք
ժպտում էինք ծառերին ծաղկոտ, հաւ-
քերին թառլան՝ ճիւղերից խօսող:

Դաշտը՝ գորգ անծայր, նազով փուռում
էր մեր սոցերի տակ. առուն գուզըն-
թաց՝ ջերմ ընկերակից մեզ հետ փայլում
էր մրմունջը բերնին:

Մեր ձայնը հնչուն՝ բնութեան գրկում, —
մեր հրըզ Աստծուն օրհնեք էր կարդում...

Նա ու ես ընկեր՝
Ջան, ուրախ ժամեր...

Բ.

Նա անցա՛ւ չկայ. —
Նա անդարձ՝ չկայ...

Շուրջս մենութիւն գերեզմանական՝ մահ-
երգակ, տխուր — իմ սրտի նման... Շուրջս
ամեն ինչ մահւան անկողնում՝ իմ սիրոյ
նման, լուռ է, մեռնում...

Ձիւնն է մրակերպ փայլուն թեփերով
թափում, հա՛, թափում մոսյլ բլուրին, —
բլուրի փեշին, ձիւնն է բարդում իմ կեանք
լճկերոյ թարմ գերեզմանին...

Նա ու ես ընկեր՝
Անվերջ սե՛ խոհեր...
չարս.

ԼՆՈՒՆ-ԼՆՈՒՆ

